ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2460-Ա/Հ «29» Հոկտեմբեր 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի № 1902-Լ որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի «Երիտասարդություն» մասի 51.3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հաստատել պետական երիտասարդական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմը՝ համաձայն հավելվածի:

11/28/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի նոյեմբերի 29-ի
№ 2460-Ա/2 հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

1. Սույնով հաստատվում է պետական երիտասարդական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմը:

2. Պետական երիտասարդական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմը մշակվել է երիտասարդական քաղաքականության նպատակների համարժեքություններին, հասարակության պահանջներին և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնահերթություններին, ինչպես նաև Եվրոպական երիտասարդական ֆորումի կողմից մշակված Երիտասարդական քաղաքականության որակի չափանիշներին և Եվրոպայի խորհրդի կողմից մշակված Երիտասարդական քաղաքականության ինքնագնահատման գործիքին, ինչպես նաև 2018 թվականին Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից մշակված «Երիտասարդական քաղաքականության որակի չափորոշիչներ» ուղեցույցին համապատասխան:

3. Պետական երիտասարդական քաղաքականությունը ենթադրում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են երիտասարդների զարգացմանը և նպաստում են հասնելու իրենց լիարժեք ներուժին: Պետական երիտասարդական քաղաքականությամբ կառավարությունը պարտավորություն է ստանձնում երիտասարդ բնակչության հանդեպ: Մասնավորապես ապահովում է երիտասարդների հզորացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումն ու զարգացումը և իրականացնում է նրանց հնարավորությունների կատարելագործմանն ուղղված զարգացման ծրագրեր:

4. Պետական երիտասարդական քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) **իրավունքների վրա հիմնված քաղաքականություն.** ինչպես առհասարակ, այնպես էլ երիտասարդական պետական քաղաքականության մշակման պարագայում իրավունքների պահպանումը կարևոր է քաղաքականությունների մշակման, իրականացման և գնահատման փուլերում: Երիտասարդական պետական քաղաքականությունը երիտասարդներին դիտարկում է որպես իրավունքների կրող, իսկ երիտասարդական քաղաքականության մշակողներին և իրականացնողներին՝ որպես այդ իրավունքների իրականացման պատասխանատուներ,

2) **երիտասարդության՝ որպես երկրի զարգացման շարժիչ ուժ դիտարկում.** երիտասարդական քաղաքականության հիմքում դրված է այն մոտեցումը, որ տարբեր ոլորտային ծրագրերում երիտասարդության շեշտադրումը կապահովի տվյալ ծրագրերի իրականացման առավելագույն արդյունքները: Երիտասարդների ներուժը օգտագործվում է բոլոր հնարավոր ոլորտներում առավելագույն կերպով, թե՛ ի շահ իրենց, թե՛ ի շահ պետության զարգացման,

3) **մասնակցություն.** սա ենթադրում է հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների, երիտասարդական խմբերի անմիջական և միջնորդավորված (երիտասարդական քաղաքացիական հասարակության կառույցների (այսուհետ՝ ՔՀԿ) միջոցով) ներգրավվածություն: Լիիրավ մասնակցության ապահովման տեսլականը ենթադրում է տեղեկացվածությունից անցում դեպի նախաձեռնողականության ցուցաբերում և ներգրավվում՝ քաղաքականություն մշակողների հետ համատեղ որոշումների կայացման համար,

4) **փաստահեն երիտասարդական քաղաքականություն.** երիտասարդական պետական քաղաքականության և ծրագրերի մշակումն ու իրականացումը հիմնված են հուսալի, թարմ հետազոտությունների, մշտադիտարկումների, գնահատումների և այլ փաստերի վրա,

5) **համաժամանակեցված երիտասարդական քաղաքականություն.** երիտասարդական պետական քաղաքականությունը համաժամանակեցված է ՀՀ զարգացման հեռանկարային ռազմավարություններին, ուղղված է դրանց իրականացմանը կամ իրականացման նախադրյալների ստեղծմանը, ուղղորդվում է հստակ սահմանված ռազմավարական նպատակներով, և յուրաքանչյուր գործողություն շարունակում է կառուցվել ձեռք բերված նվաճումների և արդյունքների հիման վրա,

6) **համագործակցություն.** երիտասարդական պետական քաղաքականության պատասխանատու գերատեսչությունների և երիտասարդության ոլորտի գործընկեր կառույցների աշխատանքն արդյունավետ կերպով համակարգվում է՝ կրկնողություններից խուսափելու և սիներգիաների կառուցման նպատակով ինչպես ոլորտի ներսում, այնպես էլ՝ միջոլորտային համագործակցության շրջանակներում,

7) **չափելիություն.** հստակ սահմանված են երիտասարդական պետական քաղաքականության իրականացման ընդհանուր ու մասնավոր արդյունքները և այդ արդյունքների չափման մեխանիզմները,

8) **թափանցիկություն և հաշվետվողականություն.** երիտասարդական պետական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման պատասխանատուներն իրականացնում են իրենց աշխատանքները հրապարակային կերպով և պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում երիտասարդներին,

9) **նորարարություն.** սա ենթադրում է նորարարության շարունակական խթանում և նոր լուծումների որոնում՝ առկա հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև այլ խնդիրների կանխարգելման համար,

10) **ներառականություն.** սակավ հնարավորություն ունեցող երիտասարդների մասնակցության հավասար հնարավորությունների ապահովում լրացուցիչ աջակցության միջոցով,
11) **հավասարություն.** բոլոր երիտասարդները ունեն ռազմավարությունների գործողությունների իրականացմանը մասնակցության հավասար հնարավորություններ:

5. Պետական երիտասարդական քաղաքականությունը բարդ գործընթաց է և ներառում է հետևյալ փուլերը՝

- Խնդիրների հետազոտում, սահմանում, նոր օրակարգի ձևավորում
- Քաղաքականության մշակում և/կամ բարելավում
- Քաղաքականության իրականացում
- Քաղաքականության մշտադիտարկում և գնահատում

6. Պետական երիտասարդական քաղաքականության որակի ապահովման գործընթացում ներգրավված են երիտասարդական քաղաքականություն մշակողներ, երիտասարդական ՔՀԿ-ներ, երիտասարդական աշխատողներ, երիտասարդներ և երիտասարդության ոլորտի այլ դերակատարներ:

7. Որակի ապահովման մեխանիզմը ներառում է հետևյալ չափանիշները.

Չափանիշ 1: Իրավունքների վրա հիմնված պետական երիտասարդական քաղաքականություն

Պետական երիտասարդական քաղաքականությունը հիմնված է մարդու իրավունքների միջազգային շրջանակի կողմից սահմանված չափանիշների վրա և հետևում է հավասարության և խտրականության դեմ սկզբունքներին: Պետական երիտասարդական քաղաքականության նկատմամբ իրավունքների վրա հիմնված մոտեցումը կոչ է անում քաղաքականություն մշակողներին աշխատել երիտասարդների իրավունքների երկարաժամկետ իրացման ուղղությամբ, ներառյալ այդ իրավունքները սահմանելու մեջ մասնակցելու իրավունքը և երիտասարդների հզորացումը՝ նրանց սահմանելով որպես իրավատեր:

Չափանիշ 2: Փաստարկված պետական երիտասարդական քաղաքականություն

Փաստարկված պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլերը հիմնված են հուսալի, բովանդակալից, անկախ և արդիական տվյալների և հետազոտությունների վրա:

Չափանիշ 3: Մասնակցային պետական երիտասարդական քաղաքականություն

Մասնակցային պետական երիտասարդական քաղաքականությունը ներգրավում է բոլոր շահագրգիռ կողմերին քաղաքականության բոլոր փուլերում, մշակումից և իրականացումից մինչև գնահատում: Շահառուներն են երիտասարդական կազմակերպությունները,

երիտասարդները և բոլոր այլ կազմակերպությունները, ինչպես նաև այն անձինք, ովքեր ազդեցություն են ունենում պետական երիտասարական քաղաքականության վրա: Հատուկ ուշադրություն է հատկացվում շահառուների շրջանում խոցելի և մարգինալացված խմբերի մասնակցությանը: Առկա են թափանցիկ մեխանիզմներ, որոնք կապահովեն քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման մասնակցությունը:

Չափանիշ 4: Բազմամակարդակ պետական երիտասարդական քաղաքականություն

Բազմամակարդակ պետական երիտասարդական քաղաքականությունը ապահովում է պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլերում համայնքային, ազգային, և միջազգային մակարդակներում համակարգված մոտեցում: Սուբսիդիարության սկզբունքը հարգվում է. քաղաքականությունը ներդրվում է առավել արդյունավետ և երիտասարդին առավել մոտ մակարդակում:

Չափանիշ 5: Ռազմավարական պետական երիտասարդական քաղաքականություն

Ռազմավարական պետական երիտասարդական քաղաքականությունը հիմնված է երկարաժամկետ տեսլականի շուրջ կառուցված և չափելի նպատակների, սահմանված թիրախային խմբերի և տարբեր պետական մարմինների միջև պատասխանատվությունների հստակ բաժանումից բաղկացած համընդհանուր ռազմավարության կամ իրավական հիմքի վրա:

Չափանիշ 6: Պետական երիտասարդական քաղաքականության համար միջոցների առկայություն

Որակյալ պետական երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման նպատակով առկա են, թե՛ ֆինանսական և թե՛ մարդկային ռեսուրսներ երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների, ինչպես նաև պետական մարմինների համար: Պետական երիտասարդական քաղաքականության դերակատարների և կառույցների կարողությունների զարգացումն ապահովելու համար տրամադրվում են աջակցության միջոցներ՝ վերապատրաստման ծրագրերից մինչև ծրագրերի ֆինանսավորում:

Չափանիշ 7: Պետական երիտասարդական քաղաքականության հաշվետվողականությունը

Որոշում կայացնողները պատշաճ միջոցներ են ձեռնարկում թափանցիկ պետական երիտասարդական քաղաքականության իրականացման և օբյեկտիվ կերպով իրենց գործողությունների վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու համար: Երիտասարդներն ու երիտասարդական կազմակերպությունները ակտիվ մաս են կազմում պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլերում:

Չափանիշ 8: Միջսեկտորային պետական երիտասարդական քաղաքականություն

Միջսեկտորային պետական երիտասարդական քաղաքականությունը ապահովում է պետական երիտասարդական քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման համար պատասխանատու տարբեր նախարարությունների, գերատեսչությունների և պետական մարմինների միջև աշխատանքի համակարգում:

8. Պետական երիտասարդական քաղաքականության որակը ապահովելու նպատակով պարբերաբար, բայց ոչ ուշ քան հինգ տարին մեկ իրականացվում է երիտասարդական քաղաքականության գնահատում՝ համաձայն ստորև ներկայացված գնահատման չափորոշիչների:

<u>Չափանիշ 1 «Իրավունքների վրա հիմնված պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներն են՝</u>

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Երիտասարդների իրավունքը սահմանված է պետական երիտասարդական քաղաքականության տարբեր փաստաթղթերում (օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր՝ Օրենք, ռազմավարական փաստաթղթեր, հայեցակարգեր և այլն):	0, 0.5, 1
2	Պետական երիտասարդական քաղաքականությունը համընդհանուր է և ոչ խտրական, թիրախային խումբն ընդգրկուն է և ներառում է բոլոր երիտասարդներին:	0, 0.5, 1
3	Պետական երիտասարդական քաղաքականությունը դիտարկում է երիտասարդներին որպես զարգացող տարիքային խումբ և համարում է այն ռեսուրս:	0, 0.5, 1
4	Պետական երիտասարդական քաղաքականությունը երիտասարդների բոլոր իրավունքները դիտարկում է	0, 0.5, 1

	հավասարազոր: Երիտասարդների իրավունքները չեն դասակարգվում հիերարխիկ կարգով:	
5	Պետական երիտասարդական քաղաքականությունը համապատասխանում է Եվրոպական սոցիալական խարտիային:	0, 0.5, 1
6	Պետական երիտասարդական քաղաքականությունը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային:	0, 0.5, 1
7	Պետական երիտասարդական քաղաքականությունը համապատասխանում է երիտասարդության հատվածը համակարգող իրավական հիմնարար փաստաթղթերին:	0-1
8	Պետական երիտասարդական քաղաքականությունը ապահովում է երիտասարդների հասանելիությունը իրենց իրավունքներին:	0, 0.5, 1
9	Կառավարությունը միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու երիտասարդների ինքնավարությունը, ինչպես նաև պատասխանատվության և մասնակցության զգացումը:	0, 0.5, 1
10	Առկա են երիտասարդական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվական, խորհրդատվական ծառայություններ տեղական, տարածաշրջանային և/կամ ազգային մակարդակով:	0, 0.5, 1
11	Կառավարությունը իրականացնում և/կամ աջակցում է երիտասարդության շրջանում իրազեկվածության և իրավունքների հասկացությանը նպաստող	0, 0.5, 1

	գործողությունների և միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով:	
12	Մարդու իրավունքների մասին կրթությունը իրականացվում է ֆորմալ կրթական ծրագրերում:	0-1

<u>Չափանիշ 2 «Փաստարկված պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներ</u>

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Երիտասարդության հիմնախնդիրներին ուղղված հետազոտությունները իրականացվում են գիտական ընթացակարգերին համահունչ:	0-1
2	Առկա են անկախ հետազոտողներ (հաստատություններ կամ վերլուծական կենտրոններ), որոնք իրականացնում եմ երիտասարդության շրջանում հետազոտություններ:	0-1
3	Անկախ հետազոտողների աշխատանքի համար առկա է պետական բյուջե:	0-1
4	Առկա է երիատասարդության շրջանում անկախ հետազոտական մարմնի գործունեության համար պետական բյուջե:	0-1

5	Պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլում օգտագործվում է արդիական տեղեկատվություն և հետազոտության արդյունքներ:	0-1
6	Պետական երիտասարդական քաղաքականության մոնիթորինգի արդյունքները հիմնված են արդի տեղեկատվության և հետազոտությունների վրա:	0-1
7	Պետական երիտասարդական քաղաքականությունը մշակված է փաստահեն տվյալների վրա, որը հավաքագրվել է սահմանված գիտական ընթացակարգերով, այդ թվում՝ երիտասարդների մասնակցության սկզբունքով:	0-1

<u>Չափանիշ 3 «Մասնակցային պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներ</u>

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլերում ապահովված է խորհրդակցությունների իրականացումը:	0, 0.5, 1
2	Համապատասխան շահագրգիռ կողմերը հանրային իշխանության կողմից հրավիրվում են դեմ առ դեմ հանդիպումների:	0, 0.5, 1

3	Որոշումներ կայացնողները երիտասարդների հետ խորհրդակցում են պետական երիտասարդական քաղաքականությունը մշակելու գործընթացից առաջ:	0, 0.5, 1
4	Երիտասարդական կազմակերպությունների և քաղաքականություն մշակողների միջև երկխոսության ապահովման համար անցկացվում են կանոնավոր առցանց և/կամ առկա ձևաչափով խորհրդատվություններ:	0, 0.5, 1
5	Բոլոր մակարդակներում առկա է համակառավարման համակարգ (կամ այլ կառուցվածքային գործիք), որպեսզի երիտասարդները հնարավորություն ունենան ներկայանալ պետական երիտասարդական քաղաքականության բոլոր գործընթացներում:	0, 0.5, 1
6	Երիտասարդական կազմակերպությունների ներգրավվածությունը տեղի է ունենում պետական երիտասարդական քաղաքականության բոլոր փուլերում:	0, 0.5, 1
7	Երիտասարդական կազմակերպությունները համարվում են հիմնական շահագրգիռ կողմեր, երբ մշակվում են երիտասարդության վրա ազդող/երիտասարդությանը առնչվող քաղաքականություններ:	0-1
8	Մինչև պետական երիտասարդական քաղաքականության մշակման գործընթացի մեկնարկը ապահովվում է երիտասարդների և	0-1

	սակավ հնարավորություններով երիտասարդների մասնակցությունը պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ուղղված քննարկումներին:	
9	Երիտասարդական աշխատանքը կամ մասնակցության ոչ ֆորմալ մեթոդները օգտագործվում են որոշումների կայացման գործընթացի մեջ երիտասարդների ներգրավման բոլոր փուլերում:	0, 0.5, 1
10	Պետական երիտասարդական քաղաքականության գործընթացին վերաբերող հանդիպումները, խորհրդակցությունները և գործողությունները ներառական են՝ հարմարեցված և մատչելի են հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների համար:	0, 0.5, 1
11	Քաղաքականություն մշակողները տրամադրում են հետադարձ կապ, թե ինչպես են օգտագործվել խորհրդատվությունների արդյունքները:	0-1

<u>Չափանիշ 4 «Բազմամակարդակ պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներ</u>

<u>N</u>	***<u>Գնահատման չափորոշիչը</u>***	***<u>Միավորը /բալ</u>***

1	Պետական երիտասարդական քաղաքականությունը համաժամանակեցված է տարբեր մակարդակների միջև՝ չի հակասում տարբեր մակարդակների և դերակատարների երիտասարդական քաղաքականություններին, աշխատում է կոմպլեմենտարության սկզբունքով:	0, 0,5 1
2	Պետական մարմինների յուրաքանչյուր մակարդակում առկա է երիտասարդության հարցերով զբաղվող կառույց (բաժին, կոմիտե, նախարարություն):	0, 0,5 1
3	Պետական երիտասարդական քաղաքականության վերաբերյալ պետական կառավարման տարբեր մակարդակներում առկա են իրավասությունների և պարտականությունների հստակ բաժանումներ:	0, 0,5 1
4	Առկա է պետական մակարդակով համակարգող մարմին, որը նաև իրականացնում է բոլոր մակարդակներում պետական երիտասարդական քաղաքականության մշտադիտարկումներ:	0-1
5	Պետական երիտասարդական քաղաքականությունը ճանաչում, բացահայտում և ներառում է երիտասարդների շրջանում աշխարհագրական և սոցիալ-տնտեսական անհամապատասխանությունները լուծելու միջոցառումներ:	0, 0,5 1

6	Տեղական երիտասարդական քաղաքականության միջոցառումներն արտացոլում են տեղական մակարդակում երիտասարդների կոնկրետ պայմանները և մարտահրավերները:	0-1

Չափանիշ 5 «Ռազմավարական պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներ

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Առկա է պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարություն:	0-1
2	Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը հասանելի է երիտասարդների և քաղաքացիական հասարակության կառույցների համար:	0-1
3	Քաղաքականության միջոցառումների թիրախ խմբերը սահմանվում են ռազմավարության շրջանակներում:	0-1

4	Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը ներառում է գործողությունների ծրագիր, որի իրականացումը նպաստում է ռազմավարության նպատակի իրականացմանը: Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը սահմանում է վերջնարդյունքներ, դրանց ցուցիչներ և գնահատման գործիքներ և չափանիշներ:	0, 0,5 1
5	Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության իրականացման համար պլանավորված է բյուջե:	0-1
6	Ռազմավարությունն ունի կոնկրետ ժամանակում իրագործելի նպատակներ:	0-1
7	Երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը ներառում է քաղաքականության ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ նպատակներ և միջոցառումներ:	0-1

<u>Չափանիշ 6 «Պետական երիտասարդական քաղաքականության համար միջոցների առկայություն». Գնահատման չափորոշիչներ</u>

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***

1	Պետության կողմից տրամադրվում են ֆինանսական միջոցներ (ինչպես վարչական, այնպես էլ ծրագրային ծախսերի համար) և այլ ռեսուրսներ, որպեսզի երիտասարդական կազմակերպությունները կարողանան իրենց գործունեությունը շարունակականորեն ապահովել:	0, 0,5 1
2	Առկա են երիտասարդական աշխատանքի զարգացմանն ուղղված ֆինանսական ներդրումներ:	0-1
3	Երիտասարդական կազմակերպությունները ներգրավված են պետական դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման և իրականացման գործընթացի մշտադիտարկման մեջ:	0-1
4	Առկա են ֆինանսական միջոցներ, որոնք ապահովում են բավարար մարդկային ռեսուրսներ և երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում:	0-1
5	Առկա են երիտասարդ առաջնորդների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր:	0-1

6	Առկա են երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների համար նախատեսված կարողությունների զարգացման և մատուցվող ծառայությունների վերաբերյալ հասանելի տեղեկատվական աղբյուրներ:	0-1
7	ՀՀ պետական բյուջեով նախատեսված են ֆինանսական միջոցներ երիտասարդական աշխատանքի վարձատրության համար:	0-1
8	Առկա է երիտասարդության հարցերով զբաղվող քաղաքացիական ծառայողների համար նախատեսված վերապատրաստման ծրագրեր:	0-1
9	Առկա է երիտասարդների և երիտասարդության հարցերով զբաղվող պետական մարմինների համար հասանելի տեղեկատվական հարթակ, որտեղ զետեղված են երիտասարդների, նրանց հիմնախնդիրների և կարողությունների զարգացման վերաբերյալ տեղեկատվություն (օրինակ՝ հետազոտություններ, տվյալներ, հայտարարություններ, նորություններ և այլն:	0-1

Չափանիշ 7 «Պետական երիտասարդական քաղաքականության հաշվետվողականությունը». Գնահատման չափորոշիչներ

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Տարբեր շահագրգիռ կողմերի միջև առկա պարտականությունները հստակորեն և հրապարակայնորեն սահմանված են	0-1
2	Երիտասարդական քաղաքականության առաջընթացը գնահատելու համար առկա է քաղաքականություն մշակողների հաշվետվողականության գնահատման համար անհրաժեշը տեղեկատվությունը:	0-1
3	Տարբեր շահագրգիռ կողմերը ժամանակին արձագանքում են իրենց ուղղված հարցադրումներին:	0-1
4	Կառավարության կողմից պարբերաբար հրատարակված հրապարակային զեկույցներում առկա է երիտասարդական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն:	0-1
5	Պետական երիտասարդական քաղաքականության շրջափուլի բոլոր փուլերի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի է երիտասարդների համար լրատվամիջոցների և այլ տեղեկատվական ալիքների միջոցով, ինչպիսիք են՝ համացանցը, պետական տեղեկատվական ալիքները, և այլն:	0, 0,5 1

6	Հրապարակված տեղեկատվությունը գրված է պարզ և բոլորի համար մատչելի տերմինաբանությամբ:	0-1
7	Երիտասարդական կազմակերպությունները մասնակցում են պետական ծրագրերի իրականացման մշտադիտարկմանը:	0-1
8	Պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվում են շահերի պաշտպանությանն ուղղված շարունակական ծրագրեր:	0-1

Չափանիշ 8 «Միջսեկտորային պետական երիտասարդական քաղաքականություն». Գնահատման չափորոշիչներ

N	***Գնահատման չափորոշիչը***	***Միավորը /բալ***
1	Առկա են տարբեր հաստատությունների միջև խորհրդատվությունների և համատեղ աշխատենքների համակարգման հնարավորություններ:	0-1
2	Տարբեր ոլորտների դերակատարների միջև իրականացվում են կանոնավոր հանդիպումներ պետական երիտասարդական քաղաքականության վերանայման համար:	0-1

3	երիտասարդական քաղաքականության բնագավառում դերակատարների միջև համագործակցությունը ապահովում է երիտասարդների հատուկ կարիքների և հիմնախնդիրները ներառումը այլ քաղաքականությունների մշակման մեջ:	0-1
4	Շահագրգիռ մարմինները իրականացնում են միջոցառումներ ուղղված երիտասարդների կարիքների և իրավունքների իրացմանը:	0-1
5	Յուրաքանչյուր համայնքում առկա են երիտասարդական աշխատողներ, ովքեր պատասխանատու են տարբեր ոլորտներին առնչվող երիտասարդների խնդիրներին ճիշտ ուղղորդման համար:	0-1
6	Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության գործողությունների ծրագրի արդյունքները բաշխվում են համապատասխան շահագրգիռ կառույցների միջև:	0-1
7	Կառավարության յուրաքանչյուր շահագրգիռ գերատեսչություն իրազեկ է պետական երիտասարդական քաղաքականության իրականացման գնահատման արդյունքների վերաբերյալ:	0-1

9. Պետական երիտասարդական քաղաքականության որակի վերջնական գնահատումն իրականացվում է համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

Չափանիշը	**Առավելագույն բալերի թիվը**	**Փաստացի հավաքած բալերի թիվը**	**Հավաքած բալերի տոկոսային հարաբերակցությունը առավելագույնի նկատմամբ**[1]
Չափանիշ 1	12		
Չափանիշ 2	7		
Չափանիշ 3	11		
Չափանիշ 4	6		
Չափանիշ 5	7		
Չափանիշ 6	9		
Չափանիշ 7	8		
Չափանիշ 8	7		
Ընդամենը %			

10. Պետական երիտասարդական քաղաքականության մշակումն ու իրականացումը գնահատվում է բավարար, եթե հավաքել է առնվազն 51% յուրաքանչյուր չափանիշի տողում: Եթե որևէ չափանիշի տողում ցուցանիշը ցածր է 51%-ից, մշակվում է բարելավման ծրագիր մեկ տարվա համար:

11. 52%-70% հավաքելու դեպքում գնահատվում է լավ:

12. 71%-100% հավաքելու դեպքում համարվում է գերազանց:

13. Որակի ապահովման մեխանիզմը նպաստում է պետական երիտասարդական քաղաքականության որակի բարելավմանը, գործընթացի վերաբերյալ տեղեկատվական դաշտի ընդլայնմանը, թափանցիկության ապահովմանը:

[1] Փաստացի հավաքած ցանկացած 1 բալը հավասար է 1,492 %

14. Որակի ապահովման մեխանիզմը արտացոլում է պետական երիտասարդական քաղաքականության առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված է նրա զարգացման հայեցակարգային և ռազմավարական գործունեության հետ: Այն սահմանում է որակի պարզ և չափելի խնդիրներ երիտասարդական քաղաքականության շրջանակներում իրականացվող տարբեր գործառույթների և մակարդակների համար:

15. Որակի ապահովման մեխանիզմը հնարավորություն է տալիս տարբեր ծրագրերի, միջոցառումների վերանայման, վերլուծության և զարգացման համար: